Հայաստանի ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն Կոալիցիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան ուսումնասիրելով ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 27-ին էլեկտրոնային փոստով ուղարկված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), գտնում է, որ այն պարունակում է թերի կարգավորումներ և առանց դրանց վերացման չի կարող ապահովել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) բնականոն և արդյունավետ գործունեությունը: Մասնավորապես.

1. Նախագծի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է. *«Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու, խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին».:* Առաջարկում ենք սույն կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին»**:

2. Նախագծի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է. «2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը.»: Հիշյալ կետերից 1-ինը վերաբերում է հետևյալին.

   «2. Հաստատել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

Առաջարկվող Նախագծով պարզ չէ, թե՝ հիշյալ կետը ուժը կորցրած ճանաչելու դեպքում, ինչպե՞ս է Խորհուրդը շարունակելու իրականացրել իր աշխատանքները՝ առանց համապատասխան կազմ ունենալու:

Նախագծի 3-րդ կետով առաջարկվում է. *«3) լրացնել 2.1 կետ՝ հետևյալ խմբագրությամբ՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմը հաստատվում է ՀՀ վարչապետի որոշմամբ.»:* Կարծում ենք, որ սույն կարգավորումը հակասում է միջազգայնորեն ընդունված այնպիսի կարևորագույն և հայտնի սկզբունքներին, ինչպիսիք են՝ թափանցիկությունը և

հրապարակայինությունը: Հենց քննարկվող Նախագծով է հարկավոր կարգավորել խորհրդի կազմը: Հիմնավորված չէ նաև երկու առանձին իրավական ակտեր ունենալու մոտեցումը, և հատկապես, դրա օբյեկտիվ անհրաժեշտությունը այն դեպքում, երբ դրանք խստորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Մեր խորին համոզմամբ, Խորհրդի **որակյալ** կազմն է, որ պետք է ապահովի Խորհրդի **արդյունավետ** գործունեությունը, հետևապես չպատճառաբանված է այն փոփոխությունը, առ այն, որ Նախագծից առանց պատշաճ հիմնավորման դուրս է մնացել խորհրդի կազմի սահմանումը: Ուստիև, **առաջարկում ենք Նախագծով հաստատել նաև Խորհրդի թիվը և դրա կազմը:**

Նախագծի 5-րդ կետով առաջարկվում է 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«1) Հայաստանի Հանրապետության վարչապետը դիմում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարներին՝ տասնհինգօրյա ժամկետում խորհրդի կազմում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններից մեկական ներկայացուցիչ ընդգրկելու նպատակով.»:* Նորմի ուսումնասիրությունից ստացվում է, որ Նախագծով նախատեսվում է Հայաստանի համայնքների միությանը (Խորհրդին անդամակցում է իր համաձայնությամբ) հանել Խորհրդի կազմից (համենայնդեպս, քանի դեռ առկա չէ կամ շրջանառված չէ Խորհրդի Կազմի նախագիծը, ընթերցողի մոտ առաջանում է այդպիսի կարծիք): Նման մոտեցումը անընդունելի է, քանի որ ընդգծելով կոռուպցիայի դեմ պայքարի դերակատարների շրջանակը, անթույլատրելի է տեղական ինքնակառավարման մարմիններին շրջանցելը: Հետևապես, կարծում ենք, որ Հայաստանի համայնքների միությունը, որին անդամակցում են Հայաստանի Հանրապետության համայնքները, պետք է ներկայացված լինի խորհրդում և լսելի դարձնի նաև տեղական ինքնակառավարման մարմինների ձայնը՝ կոռուպցիայի դեմ պայքարում: **Առաջարկում ենք Նախագծով կարգավորել Խորհրդին Հայաստանի համայնքների միության անդամակցության հարցը:**

Նախագծի 9-րդ կետով առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունը. *«7-րդ կետում «արդարադատության նախարարին» բառերը փոխարինել «վարչապետի աշխատակազմի ղեկավարին» բառերով, իսկ «կառավարության աշխատակազմ» բառերը փոխարինել «վարչապետի աշխատակազմ» բառերով.»*:

Գործող որոշմամբ կարգավորումը հետևյալն է. «7. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել

«Հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը»:

Հաշվի անելով այն հանգամանքը, որ արդարադատության նախարարությանը՝ որպես լիազորված մարմին, վերապահված է հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և իրականացումը ՀՀ-ում, այս տեսանկյունից կարևոր է նշված գործառույթի իրականացումը հենց արդարադատության նախարարության կողմից: **Առաջարկում ենք փոփոխության չենթարկել գործող նորմը:**

Նախագծով փոփոխություններ են առաջարկվում նաև Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեության կարգում (այսուհետ՝ Կարգ): Մասնավորապես, Կարգի 7-րդ կետով ներկայացվում է Խորհրդի կազմում ընգրկվելիք հասարակական կազմակերպություններին առաջադրվող չափանիշները, ըստ որի.

«7. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն հասարակական կազմակերպությունները, որոնք՝

1) ունեն հակակոռուպցիոն ոլորտի՝ վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարվա գործունեության փորձ.

2) որոնց կանոնադրությամբ ամրագրված է հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվելը.

3) ունեն միջազգային կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցության փորձ»:

Կարծում ենք, որ առաջադրվող չափանիշները կրում են **խիստ ձևական բնույթ, վերացական են և նպատակ են հետապնդում Խորհրդում ապահովել հասարակական կազմակերպությունների «զուտ» ներգրավվածություն**: Մեր խորին համոզմամբ, Խորհուրդը դա մասնագիտական լուրջ քննարկումների հարթակ է և պետք է լինի Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների նախաձեռնողներից և առաջատարներից մեկը: Այս պարագայում դժվար է պատկերացնել, մեկ տարվա փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների դերը Խորհրդի շրջանակներում: Ավելին, առաջարկվող նախագծով անգամ պարզ չէ, թե՝ ի՞նչ պետք է հասկանալ «մեկ տարի» փորձ ասելով, ի՞նչ է ներառում այդ փորձը, և ինչպե՞ս է հավաստվելու այդ փորձի առկայությունը: Համեմատության համար, նշենք, որ Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպությունների մի ստվար զանգվածի կանոնադրություններում որպես գործունեության տեսակներ նշված են՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հակակոռուպցիոն գործունեությունը: Մինչդեռ, իրականությունը լրիվ այլ է. վերը նշված ՀԿ-ների միայն փոքր տոկոսն է, որ ունի համապատասխան ներուժ և մասնագիտական փորձառություն հակակոռուպցիոն ոլորտում: Ուստի ակնհայտ է, որ հիշյալ

կանոնադրական դրույթը չի կարող լինել բավարար չափանիշ՝ հասարակական կազմակերպությանը հակակոռուպցիոն ոլորտում փորձառություն ունեցող համարելու համար: Հավելենք նաև, որ այս քննարկվող դրույթը արդյունավետ և օբյեկտիվ կգործի միայն այլ՝ առավել թիրախային և մրցունակ չափանիշների հետ համադրելու արդյունքում:

Այսպիսով, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, գտնում ենք, որ Խորհրդում պետք է ընդգրկվեն հասարակական սեկտորի այնպիսի ներկայացուցիչներ, ովքեր ունեն լուրջ մասնագիտական փորձառություն և պատրաստվածություն այս ոլորտում, և կարող են Խորհրդի քննարկմանը ներկայացնել փաստարկված առաջարկություններ՝ փորձագիտական հենքով: Եթե անգամ հաշվի առնենք, որ սույն Նախագծով փորձ է արվում ապահովել հասարակական կազմակերպությունների լայն ներգրավվածություն, ապա պետք է նշել, որ ՀՀ նախարարություններին կից գործում են հասարակական խորհուրդներ և այն հասարակական կազմակերպությունները, ովքեր ցանկանում են լինելու մասնակցային կառավարման մի մասը, կարող են անդամակցել հիշյալ հասարակական խորհուրդներին:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք Կարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն հասարակական կազմակերպությունները, որոնք՝

1) **ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձ առնվազն վերջին հինգ տարիներին.**

2) **որոնց կանոնադրությամբ ամրագրված է հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվելը.**

3) **կներկայացնեն միջազգային կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 3 մեծ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն.**

4) **կներկայացնեն միջազգային կառույցների հետ իրականացված առնվազն 2 ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործընկեր միջազգային կազմակերպության դրական եզրակացություն (գնահատական).**

5) **ՀՀ պետական, այդ թվում իրավապահ մարմինների և ՏԻՄ-երի հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցության փորձառություն և կազմակերպական կարողություններ.**

6) **հակակոռուպցիոն միջազգային կազմակերպություններին և ցանցերին մասնակցություն ու անդամակցություն:»**

Առաջարկում ենք Նախագծի 13-րդ կետում լրացնել 2.1 և 2.2 կետեր հետևյալ խմբագրությամբ.

«2.1. առաջադրում է օրակարգ կամ դրանում ներառվելիք հարցեր.

2.2. իրականացնում է սույն կարգից բխող գործունեության հետ կապված հարցումներ:»:

Առաջարկում ենք Նախագծում Հավելված 1-ի ներքո սահմանել խորհրդի կազմը՝ հետևյալ խմբագրությամբ.

«Կ Ա Զ Մ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ

- Հայաստանի Հանրապետության վարչապետ (Խորհրդի նախագահ)
- Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետ
- Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար
- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
- Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
- ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (համաձայնությամբ)
- Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետ
- Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պետ
- Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահ (համաձայնությամբ)
- Խորհրդարանական խմբակցություններից մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հանրային խորհրդի նախագահ (համաձայնությամբ)

- Հայաստանի համայնքների միության մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հասարակական կազմակերպությունների չորս ներկայացուցիչ (համաձայնությամբ),

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան միավորում է շուրջ 95 հայաստանյան ՔՀԿ-ների, և ղեկավարվելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, ըստ որի՝ *«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ,* ***քաղաքացիական հասարակության,*** *ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում* ***ակտիվ մասնակցությանը նպաստելու համար*** *և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար»*, առաջարկում ենք Կոալիցիային Խորհրդում իր համաձայնությամբ հատկացնել 1 տեղ, իսկ մյուս 4 ՔՀԿ-ներին ընտրել մրցութային կարգով՝ հաստատված չափորոշիչների հիման վրա:

Կոալիցիան այժմ էլ հանդիսանում է Խորհրդի անդամ՝ մշտական հիմունքներով և կանգնած է Հայաստանում վերջին տարիներին իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների ակունքներում: Մասնավորապես, Կոալիցիան նախաձեռնել և ներդրել է այնպիսի կարևորագույն հակակոռուպցիոն ինստիտուտներ, ինչպիսիք են՝

- Հայաստանում ապօրինի հարստացման քրեականացումը, ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է 310.1 հոդվածը.
- Անկախ հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի՝ կոռուպցիայի կանխարգելման մարմնի ստեղծումը, ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը.
- Ազդարարման ինստիտուտի ներդրումը, ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը.
- Պետական գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը, ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը և նորմը ամրագրվել է Օրենքի 28-րդ հոդվածում:

- Փոփոխություններ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող գույքի և եկամուտների հայտարարագրերի համակարգում.
- Ներկայացրել է 100-ից ավել առաջարկություններ բիզնես ոլորտում, որոնց մի մասը կատարվել է, մյուս մասը՝ գտնվում է կատարման փուլում:

Բացի այդ, առաջարկում ենք Խորհրդի գործունեությունն իրականացնել դռնբաց նիստերի միջոցով՝ ապահովելով նիստերի ուղիղ հեռարձակումը::